

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը տեղեկատվություն է ներկայացնում 2011 թվականի փետրվարին երկրի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

ՄԱԿՐՈՏՆԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2011թ. փետրվարի արդյունքները բնութագրող հիմնական ցուցանիշները

	Չափի միավոր	2011թ. փետրվար	2011թ. փետրվարը 2010թ. փետրվարի նկատմամբ, %	Փետրվարը հունվարի նկատմամբ, %
Տնտեսական ակտիվության ցուցանիշը	%	x	101.4	103.7
Արդյունաբերական արտադրանքի ծավալը	մլն. դրամ	68950.7	102.6	105.5
Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը	մլն. դրամ	20016.9	100.1	126.3
Շինարարության ծավալը	մլն. դրամ	12027.1	95.9	126.2
Առևտրի շրջանառությունը	մլն. դրամ	121797.8	100.1	119.9
Ծառայությունների ծավալը (առանց առևտրի)	մլն. դրամ	57882.4	106.4	88.9
Սպառողական գների ինդեքսը	%	x	112.4	101.9
Էլեկտրաէներգիայի արտադրությունը	մլն. կՎտ.ժ	588.8	122.1	90.1
Միջին ամսական անվանական աշխատավարձը	դրամ	108220	105.7	102.8
Արտաքին առևտրաշրջանառությունը	մլն. դոլար	364.5	112.4	112.7
	մլրդ. դրամ	133.1	x	x
այդ թվում՝				
արտահանում	մլն. դոլար	90.0	132.0	135.7
	մլրդ. դրամ	32.9	x	x
ներմուծում	մլն. դոլար	274.5	107.2	106.7
	մլրդ. դրամ	100.2	x	x

Ծանուցում. 2011 թվականից սկսած հրապարակվելու է ամսական «Տնտեսական ակտիվության ցուցանիշը»։ Ի տարբերություն «Համախառն ներքին արդյունքի ցուցանիշի», «Տնտեսական ակտիվության ցուցանիշը» հաշվարկվում է ըստ տնտեսական գործունեության տեսակների թողարկման ծավալների, ոչ թե ավելացված արժեքների ծավալների հիման վրա և չի ներառում արտադրանքի զուտ հարկերը և ֆինանսական միջնորդության անուղակիորեն չափվող ծառայությունները: Պարզաբանումները ներկայացված են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011թ. հունվարին» տեղեկատվական ամսական զեկույցի էջ 8-ում: